«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Քրեական դատավարության 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248 օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 152-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 152. Կասկածյալի կամ մեղադրյալի լիազորությունների կասեցումը (ժամանակավորապես դադարեցումը)

1. Դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչն իրավունք ունի կասեցնել (ժամանակավորապես դադարեցնել) կասկածյալի կամ մեղադրյալի լիազորությունները, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ:
2. Աշխատողի լիազորությունների կասեցման մասին որոշումն ուղարկվում է կասկածյալի կամ մեղադրյալի աշխատավայր և ի կատար է ածվում այն ստանալուց հետո եռօրյա ժամկետում համապատասխան իրավասություն ունեցող անձի կողմից, այդ թվում՝ այն դեպքում, երբ լիազորությունը կասեցնելու իրավասությունը պատկանում է կասկածյալին կամ մեղադրյալին: Որոշումն ի կատար ածվելու մասին գրավոր տեղեկացվում է համապատասխան որոշումը կայացրած մարմինը կամ անձը:
3. Լիազորությունների կասեցման մասին որոշումը վերացվում է դատարանի, դատախազի կամ քննիչի որոշմամբ, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-124-Ն Աշխատանքային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 107.1-ին հոդվածով.

«Հոդված 107.1. Աշխատողի լիազորությունների կասեցումը (ժամանակավորապես դադարեցումը)

1. Կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունները կարող են կասեցվել (ժամանակավորապես դադարեցվել) դատախազի, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչի որոշմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ:
2. Աշխատողի լիազորությունների կասեցման մասին որոշումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում նրան աշխատանքի ընդունելու իրավասություն ունեցող անձը ընդունում է աշխատողի լիազորությունների կասեցման մասին անհատական իրավական ակտ, որի մասին ոչ ուշ քան 3-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է համապատասխան որոշումը կայացրած մարմնին կամ անձին:
3. Աշխատող հանրային ծառայողի լիազորությունների կասեցման պահից մինչև կասեցման վերաբերյալ որոշման վերացումը աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) և աշխատավարձը պահպանվում են, սակայն չի պահպանվում աշխատողի ամենամյա արձակուրդի իրավունքը:
4. Լիազորությունների կասեցումը արգելք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե կասեցման ժամանակահատվածում առաջացել են աշխատանքային պայմանագիրը լուծելու օրենքով նախատեսված հիմքեր:»: